ՀԱՇՏԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական խոսույթի զարգացումն Էրդողանի պաշտոնավարման շրջանում

ՀԱՍԱՆ ԷԼԱՅԱԴԻ
Լոնդոնի Գոլդսմիթս համալսարան, Միացյալ թագավորություն

Ավելի քան հարյուր տարի Թուրքիան չի ճանաչում 1915թ. կոտորածները որպես ցեղասպանություն: Պատճառները խորն են և արմատացած թուրքական ինքնության մեջ, որը թուրքերը և թուրքական պետությունը փորձել են ձևավորել պետության ստեղծման պահից սկսած: Հոդվածում փորձ է արվում բացահայտել ժխտման պատճառները ծանրակշիռ փաստերի առկայության պայմաններում, ինչպես նաև Էրդողանի պաշտոնավարման շրջանում այդ ուղղությամբ արձանագրված հնարավոր փոփոխությունները: Հոդվածում նշվում է, որ Թուրքիայի պաշտոնական խոսույթը Հայոց ցեղասպանության վերաբերյալ զարգացել է Էրդողանի պաշտոնավարման շրջանում: Միաժամանակ, ընդգծվում է, որ կարևոր է չուռճացնել խոսույթի զարգացման աստիճանը: Թեև Էրդողանը երբեմն առանձնացել է ավելի մեղմ և հաշտեցման տարրեր պարունակող խոսույթով, սակայն միշտ հստակ դիրքորոշում է պահպանել «Ցեղասպանություն» եզրույթը ճանաչելու հիմնահարցի վերաբերյալ:

Բանալի բառեր
Հայոց ցեղասպանություն, ժխտում, թուրքական պետություն, պաշտոնական խոսույթ

Նախաբան

Հայոց ցեղասպանությունը համարվում է «առաջին ժամանակակից ցեղասպանությունը», քանզի դրա հիմքում ընկած էր «օտար տարրերի

բնաջնջման միջոցով ազգային պետության ստեղծման» գաղափարը[1]: Հայոց ցեղասպանությանը հաճախ անդրադառնում են այնպես, ինչպես Հոլոքոսթին: Պատմաբանները և նախկին թուրք առաջնորդները 1915թ. իրադարձությունները բնորոշում են որպես «Հայկական հարց»՝ ընդգծելով դրա ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ասպեկտները[2]: Հայերն ունեցել են հարուստ պատմական մշակույթ, սակայն մինչև 20-րդ դարը ենթարկվել են դարավոր հալածանքների՝ գտնվելով Արևմուտքի և Արևելքի միջև ռազմավարական խաչմերուկում[3]: Նախքան 1453թ. Օսմանյան կայսրության կազմ մտնելը՝ Սուլթան Մեհմեդ II-ի կառավարման շրջանում, Հայաստանը նվաճել են հռոմեացիները, հույները, պարսիկները, մոնղոլները, բյուզանդացիները, ռուսները և արաբները:[4] 16-րդ դարի ընթացքում Հայաստանը մրցակցության առարկա էր Պարսկաստանի համար՝ նախքան զինադադարի մասին համաձայնագրի կնքումը, որով Արևմտյան Հայաստանն անցավ Օսմանյան կայսրության, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի կազմ[5]:

Օսմանյան դարաշրջանում հայկական փոքրամասնության նկատմամբ ոտնձգությունները շարունակաբար սաստկանում էին, ինչն ավարտվեց 1915թ. Հայոց ցեղասպանությամբ: Ավելի քան հարյուր տարի Թուրքիան այդ իրադարձությունները չի ճանաչում որպես ցեղասպանություն: Հոդվածում փորձ է արվում բացահայտել ժխտման պատճառները ծանրակշիռ փաստերի առկայության պայմաններում, ինչպես նաև Էրդողանի պաշտոնավարման շրջանում տեղի ունեցած հնարավոր փոփոխությունները: Նախքան կդիտարկվեն ժխտման գաղափարը, ինչպես նաև Թուրքիայի ժխտողական քաղաքակա-նության պատմությունը, հոդվածում նախ ներկայացվում է համառոտ ակնարկ ցեղասպանության մասին: Այնուհետև ուսումնասիրվում են

---

[1] **Bloxham D.,** The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians, Oxford, Oxford University Press, 2005, p. 94.

[2] **Hovannisian R. G.,** The Armenian Genocide in Perspective, London, Transaction Publishers, 2009, p. 19.

[3]Նույն տեղում:

[4] **Parker P. O,** Roots Matter: Healing History, Honoring Heritage, Renewing Hope. Amsterdam, Wipf and Stock Publishers, 2016.

[5]Նույն տեղում:

Էրդողանի պաշտոնավարման շրջանում հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության շուրջ բանավեճի վրա ազդող միջազգային և ներպետական առանցքային գործոնները: Հոդվածում նշվում է, որ այդ շրջանում Էրդողանի հայտարարություններն ավելի մեղմ էին և պարունակում էին հաշտեցման տարրեր, ինչը համահունչ է թուրք հասարակության տեսակետներին: Միաժամանակ, ընդգծվում է, որ ինչպես նախկինում, այս շրջանում ևս չկա որևէ գործնական քայլ «ցեղասպանություն» եզրույթը ճանաչելու ուղղությամբ, ինչը քիչ հավանական է, որ կփոխվի տեսանելի ապագայում:

Ակնարկ Հայոց ցեղասպանության մասին

Թեև Օսմանյան կայսրությունը համընդգրկուն նախագիծ էր, որտեղ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ կար հանդուրժողականություն, և նույնիսկ ազգությամբ հայեր զբաղեցնում էին բարձր պաշտոններ կառավարության կազմում, քաղաքային միջավայրից դուրս ապրող շատ հայերի համար իրավիճակը լիովին այլ էր[6]: Գյուղական շրջաններում հայերը ենթարկվում էին կրոնական հալածանքների մահմեդական մեծամասնության կողմից, հաճախ պարտադրված էին ընդունել իսլամ, ինչպես նաև առևանգվում և ենթարկվում էին բարձր հարկման[7]: 1894-1896թթ. հալածանքների սաստկացող ալիքը վերաճեց 100,000-200,000 հայերի կոտորածի՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանում, իսկ 1909թ. ևս 30,000 հայ սպանվեց Ադնայի շրջանում[8]: Պատմաբանների բանավեճի առարկա է այն հարցը, թե արդյոք Հայոց ցեղասպանությունը պետք է դիտարկել որպես 16-րդ դարի հալածանքների շարունակություն, թե երիտթուրքերի շարժման արդյունք՝ ազգային և էթնիկ առանձնահա-

[6] **Tas L.,** Legal Pluralism in Action: Dispute Resolution and the Kurdish Peace Committee, London, Taylor & Francis, 2016; **Saltman R.,** Sacred Humanism without Miracles: Responding to the New Atheists, Basingstoke, Palgrave Macmillan, 2012.
[7] **Saltman R.,** նշվ. աշխ.:
[8] **Rubenstein R. L.,** Jihad and Genocide, Maryland, Rowman & Littlefield Publishers, 2011.

տուկ ուրվագծերով[9]: Սակայն, անկախ 1915թ. Հայոց ցեղասպանության հիմքում ընկած դրդապատճառներից, այն սկսվեց հայ մտավորականների ձերբակալությունների մասին հրամաններով, որոնք արձակում էին թուրքական իշխանությունները[10]: Հայերի կոտորածների վերաբերյալ առկա ծանրակշիռ փաստերը և հաջորդիվ հայկական փոքրամասնությունների բնաջնջման քարոզարշավն անվիճելի են: ԱՄՆ հյուպատոսության պաշտոնատար անձանց հաշվետվությունները, բազմաթիվ երկրներում պահվող արխիվային նյութերը, ցեղասպանության հանցագործների դատավարությունների արձանագրությունները, ցեղասպանություն վերապրածների և արևմտյան ականատեսների վկայությունները, ԶԼՄ-ների լուսաբանումը և պատմաբանների հետաքննությունը վկայում են ցեղասպանության եղելության մասին[11]: 1-1.5 միլլիոն հայեր կամ սպանվեցին, կամ զոհվեցին հարկադրական արտաքսման արդյունքում: Շատերը ստիպված էին կրոնափոխ լինել, հատկապես՝ կանայք, ովքեր ենթարկվում էին թուրք տղամարդկանց ոտնձգություններին և բռնի ամուսնությունների[12]:

Թուրքական պետության կողմից Հայոց ցեղասպանության ժխտման կոնցեպտուալացում

Ժխտումը և, մասնավորապես, «ցեղասպանության ժխտումն» ակնհայտորեն սույն վերլուծության առանցքային հայեցակարգեր են, ուստի կարևոր է հստակեցնել դրանց ճշգրիտ իմաստը[13]: Շրոդտը տարբերակում է ժխտման երկու պատճառ՝ ժխտում անտեղյակության կամ խաբեության արդյունքում[14]: Առաջինը ինչ որ առումով ներելի ու

[9]Նույն տեղում:
[10] **Eckersley S., Lloyd K., Whitehead C., Mason R.,** Museums, Migration and Identity in Europe: Peoples, Places and Identities, London, Routledge, 2015.
[11] **Demirdjian A.,** The Armenian Genocide Legacy. Basingstoke, Palgrave Macmillan UK, 2016.
[12] Նույն տեղում:
[13] **Schrodt N.,** Modern Turkey and the Armenian Genocide: An Argument About the Meaning of the Past, New York, Springer International Publishing, 2014.
[14]Նույն տեղում:

հասկանալի է, քանզի դրա ելակետը անբավարար գիտելիքն է[15]: Սակայն ժխտումը խաբեությամբ՝ այն, ինչ Շրոդտը անվանում է «խաբեություն», միանգամայն այլ է, քանզի այդ հիմքով որևէ բան ժխտելու համար անհրաժեշտ է փաստերի և մեթոդաբանության որոշակի մակարդակի ընդհանրություն նրանց հետ, ովքեր հակառակ կարծիքն են առաջ քաշում[16]: Հեղինակը նշում է, որ դա ժխտման պարադոքս է, քանի որ «որևէ բան ժխտելու համար, նախևառաջ պետք է իմանալ դրա մասին»[17]: 1923թ. Թուրքիայի ստեղծումից հետո երկրի բարձրագույն առաջնորդները հստակ ցանկություն ունեին ձևավորելու նոր կառույցներ և ինստիտուտներ, ու այդ համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչումը որևէ տեղ չուներ[18]:

Թուրքիայի հիմնադիր Աթաթուրքի նախաձեռնած այդ «ազգակերտման նախագիծն» ուղղված էր ձևավորելու մշակութային միատարրության և ազգային ինքնության ուժեղ զգացում: Հայոց ցեղասպանության ժխտումը պետք է գնահատել այդ ինստիտուցիոնալ և գաղափարական շրջանակներում[19]: Ինչպես նշում է Կայան, ժխտումն իրականացվում էր համակարգային մակարդակում՝ Թուրքիայում գործող ինստիտուտներում, քանզի Աթաթուրքը ոչ միայն չէր ընդունում Հայոց ցեղասպանության եղելությունն, այլև հերքում էր ոչ թուրքական փոքրամասնությունների գոյությունը Թուրքիայում, կտրուկ հակադրվելով Օսմանյան կայսրությանը[20]: Գալով իշխանության՝ Աթաթուրքն առաջ քաշեց արդիականացման, աշխարհիկացման և արևմտականացման օրակարգը, և թերևս զարմանալի չէ, որ Թուրքիայի արդիականացմանն ուղղված ծրագրի մի մասն էլ Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնումն ու ժխտումն էր[21]: 1931թ. Աթաթուրքը հիմնեց Թուրքական պատմական ընկերությունը, որը

---

[15] Նույն տեղում:

[16] **Schrodt N.,** նշվ. աշխ., էջ 264:

[17] **Schrodt N.,** Modern Turkey and the Armenian Genocide: An Argument About the Meaning of the Past, New York, Springer International Publishing, 2014.

[18] **Demirdjian A.,** նշվ. աշխ.:

[19] **Kaya M. S.,** The Zaza Kurds of Turkey: A Middle Eastern Minority in a Globalised Society, New York, I. B. Tauris, 2011.

[20] Նույն տեղում:

[21] **Alayarian A.,** Consequences of Denial, The Armenian Genocide, London, Karnac Books, 2008.

պետք է վերահսկեր թուրքական պետության պաշտոնական պատմությունը: Այդ մարմնի առաջ քաշած կեղծ պատմության օրինակ էր նաև այն, որ Հայոց ցեղասպանության արդյունքում զոհվել է 150 հազար մարդ[22]: Սակայն, Ընկերությունն ունեցավ ավելի համընդգրկուն դերակատարություն, քան միայն Հայոց ցեղասպանությանն անդրադարձը, քանզի այն ներգրավված էր նաև Թուրքիայի պատմության նենգափոխման գործընթացում[23]: Աթաթուրքը նույնիսկ վերափոխեց թուրքական այբուբենը՝ փորձելով թուրքերենը հեռացնել իր օսմանյան արմատներից՝ այն, իր իսկ խոսքերով, ազատելով «օտար լեզուների լծից»[24]:

Հետևապես, ապագա սերունդները չէին կարող գնահատել Օսմանյան կայսրության պատմությունը միևնույն չափով, քանզի նրանք չէին հասկանում իսլամական լեզուներով այն տեքստերը, որոնք ներկայացված էին արաբական այբուբենով[25]: Օսմանյան կայսրության հանդուրժողականությունը և բազմազգությունը ջնջվել էին պաշտոնական Թուրքիայի պատմությունից, և դրա նպատակն էր Թուրքիան ներկայացնել որպես էթնիկ միատարրություն ունեցող ժամանակակից և հզոր ազգ[26]: «Պատմական փաստերի խեղաթյուրումը» խոր հետևանքներ ունեցավ Օսմանյան կայսրության ներսում հայերի դերակատարության վրա և թուրք դպրոցականների ու այլոց կողմից Թուրքիայի անցյալը հասկանալու գործում[27]: Մինչև միջնադար հայերի մասին որևէ հիշատակում չկար, նրանց մասին նշվում էր միայն պատմության ավելի ուշ փուլերում, և, հետևաբար, Հայոց ցեղասպանության մասին ևս ոչինչ չէր նշվում[28]: Ցեղասպանության եղելությունը հասարակության գիտակցությունից

[22] **Kramer P. A.,** Dynamic of Destruction: Culture and Mass Killing in the First World War: Culture and Mass Killing in the First World War, Oxford, Oxford University Press, 2007.
[23] **Bobelian M.,** Children of Armenia: A Forgotten Genocide and the Century-long Struggle for Justice, New York, Simon & Schuster, 2009.
[24] **Papadakis Y.,** Echoes from the Dead Zone: Across the Cyprus Divide, London, I. B. Tauris, 2005, p. 27.
[25] **Papadakis Y.,** նշվ. աշխ.:
[26] **Bobelian M.,** նշվ. աշխ.:
[27] **Bobelian M.,** նշվ. աշխ., էջ 80:
[28] Նույն տեղում:

ջնջելուց զատ, թուրքական կառավարությունը մշտապես ձգտում էր երկրի մակերեսից ջնջել հայերի գոյության ցանկացած ֆիզիկական հետք, այդ թվում՝ հայկական ճարտարապետության և հուշարձանների ոչնչացման ճանապարհով[29]: Այդ պետական վարքագիծը դարձավ զգալի ինստիտուցիոնալ հենք, որը Աթաթուրքի մահից հետո շարունակվում էր դեռևս տևական ժամանակահատված[30]: Ջոնսը նշում է այն մեծ ֆինանսավորումը, որը տրամադրվում էր հանրային կապերին և, մասնավորապես, Ամերիկյան համալսարանի նվիրատվությունները, որոնք կարող էին պաշտպանական դիրք ապահովել Հայոց ցեղասպանության ժխտման հարցի առնչությամբ[31]: Ուստի, կարևոր է հասկանալ, որ ժխտումը ոչ թե պարզապես մշակութային գործընթաց է, որը ձևավորվել է հասարակ թուրք ժողովրդի մտածելակերպի և ցանկությունների արդյունքում, այլև այն, որ ժխտման պատմության ողջ ընթացքում թուրքական պետության կողմից գործադրվել են համակարգված ջանքեր՝ ուղղված 1915թ. իրադարձությունների խեղաթյուրմանը:

Կարևոր է նաև ուսումնասիրել թուրքական կառավարության ժխտողական քաղաքականության պատմությունը՝ Թուրքիայում այլ էթնիկ փոքրամասնությունների գոյության համատեքստում: Այդ տեսանկյունից հարկ է գնահատել այն հնարավոր ազդեցությունները, որոնք կարող է ունենալ մեղքի ընդունումը Թուրքիայի և այլ էթնիկ փոքրամասնությունների միջև հարաբերությունների, ինչպես նաև երկրի միատարրության ապահովման գործընթացի վրա: 1923թ. Լոզանի պայմանագիրը պաշտպանված կարգավիճակ էր շնորհում Թուրքիայում բնակվող հայ, հույն և հրեա փոքրամասնություններին, սակայն նրանց նկատմամբ հետապնդումները շարունակվում էին[32]: Հայ ազգային ինստիտուտի իրականացրած հետազոտությունը ցույց է

---

[29] **Jones A.,** Genocide: A Comprehensive Introduction, London, Taylor & Francis, 2016.

[30] Նույն տեղում:

[31] Նույն տեղում:

[32] **Gellman M.,** Democratization and Memories of Violence: Ethnic Minority Rights Movements in Mexico, Turkey, and El Salvador, London, Taylor & Francis, 2016; Armenian National Institute 2017, Turkey, Republic of and the Armenian genocide, http://www.armenian-genocide.org/recognition countries.html (18.04.2017).

տալիս, որ 1923 թվականից սկսած թուրքական կառավարության վերաբերմունքը փոքրամասնությունների նկատմամբ տատանվում էր արհամարհանքի և բռնաճնշումների միջև, և, որ Երկրորդ համշախարհային պատերազմի ընթացքում բոլոր փոքրամասնությունները ենթակա էին բարձր հարկման և բռնությունների[33]: 1955թ. Ստամբուլում տեղի ունեցած ռազմական բախումներից հետո հույների մեծամասնությունը արտաքսվեց Թուրքիայից[34], իսկ հրեաների զգալի մասն ապաստան գտավ Իսրայելում: Հետապնդումների, արհամարհանքի և մարգինալացման արդյունքում Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի և 1990-ական թվականների միջև ընկած ժամանակահատվածում հայ բնակչությունը նվազեց 50 տոկոսով (150 հազար մարդ)[35]: Թուրքական կառավարությունը քրդերի նկատմամբ ևս շարունակում էր բռնությունների քաղաքականությունը: Քրդական խմբերի ու թուրքական կառավարության միջև զինված բախումները ընդգծում են այն դերակատարությունը, որն ունի Թուրքիայի ազգային անվտանգությունը փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմուն-քի առնչությամբ[36]: Դա նշանակում է, որ ցանկացած հնարավոր զիջում (օրինակ՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը) կարող է մեկնաբանվել որպես այլ փոքրամասնությունների հանդեպ հնարավոր թուլության նշան, ինչը կարող է վտանգել թուրքական պետության գոյությունը և երկրի տարածքային ամբողջականությունը:

Ուստի պարզ է, որ Հայոց ցեղասպանությունը չճանաչելու Թուրքիայի պատճառները խորն են և արմատացած թուրքերի ինքնության մեջ, որը թուրքական պետությունը փորձել է ձևավորել երկրի ստեղծման պահից սկսած: Ավելի քան մեկ դար Թուրքիայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ

[33] Armenian National Institute, նշվ. աշխ.:
[34] Նույն տեղում:
[35] Նույն տեղում:
[36] **Gunes C.,** The Kurdish National Movement in Turkey: From Protest to Resistance, London, Taylor & Francis, 2013.

մնացել է անփոփոխ[37]: Ցեղասպանությունը ճանաչելու կոչերին Թուրքական կառավարությունն արձագանքել է լռությամբ և ժխտմամբ: Ալայարյանը նշում է, որ այդպիսի «սոցիալական ամնեզիան» կարող է տեղի ունենալ այնպիսի համատեքստում, որում արձանագրվել է պատմության նենգափոխում[38]: Հեղինակն անդրադառնում է պատմության նենգափոխմանը մշակութային և մտավոր տեսանկյունից, ինչը ներառում է կեղծ ձայնագրություններ և փաստաթղթեր, քարոզչություն, արխիվների ոչնչացում, մտավորականների կաշառակերություն, բազմաթիվ անձանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներ[39]: Ակնհայտ է, որ միմյանց հաջորդող թուրքական կառավարությունները և թուրքական ինստիտուտներն ունեին բավարար գիտելիքներ և տեղեկություններ Հայոց ցեղասպանության իրադարձությունների մասին, ուստի այն պնդումը, որ մերժումը հիմնված է անտեղյակության վրա, լիովին անտրամաբանական է: Պատկերը կարող է մի փոքր այլ լինել թուրք հասարակության դեպքում, որին սերնդեսերունդ ներկայացվում էին կեղծ պատմություններ երկրի մասին: Միաժամանակ, ներկայիս թվային դարաշրջանում քիչ հավանական է, որ շարքային քաղաքացին հնարավորություն չունենա ծանոթանալ ցեղասպանության վերաբերյալ փաստերին:

Այդուհանդերձ, անցյալում թուրք ղեկավարների ժխտումները այն հարցի վերաբերյալ, թե արդյոք 1915թ. իրադարձությունները համարվում են ցեղասպանություն, վճռական և միանշանակ էին[40]: 1994թ. Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերը նշում էր. «Այսօր ակնհայտ է, որ Հայաստանի պահանջներն անհիմն են և պատմական փաստերի լույսի ներքո՝ մտացածին: Հայերի նկատմամբ ցեղասպանություն չի իրականացվել»[41]: Թուրքիայի ժխտման կենտրոնական փաստարկն այն է, որ 1915թ. իրադարձությունները ցեղասպանություն

---

[37] Turkey must end its 100 years of genocide denial, *The Guardian*, 2015, https://www.theguardian.com/commentisfree/2015/apr/21/turkey-100-years-genocide-denial- Armenia, (17.04.2017).

[38] **Alayarian A.,** նշվ. աշխ., էջ 4:

[39] **Alayarian A.,** նշվ. աշխ.:

[40] **Macdonald D. B.,** Identity Politics in the Age of Genocide: The Holocaust and Historical Representation, London, Taylor & Francis, 2007.

[41] **Macdonald D. B.,** նշվ. աշխ., էջ 115:

չէր, այլ քաղաքացիական պատերազմի և պատերազմական շրջանի տեղափոխությունների մի մաս[42]: Անբեկանելի ժխտումների բնույթը հասկանալի է այն իմաստով, որ թուրքական կառավարությունն ավելի քան մեկ դար փորձել է կամ լռեցնել պատմությունը, կամ ջնջել այն, և, հաշվի առնելով այդ նախագծին հատկացված հսկայական ինստիտուցիոնալ ռեսուրսները, մեղավորության ընդունումը կամ զիջումներն արմատապես կհակասեին պետական շահերին[43]: Այն թեզը, որ թուրքական կառավարությունը փորձում է ճնշել Հայոց ցեղասպանության շուրջ բանավեճն իր երկրի սահմաններում ավելի ընդգծվեց 2005թ., երբ Թուրքիայի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածը փոխարինվեց 301-րդ հոդվածով[44]: 301-րդ հոդվածով նշվում էր, որ «թուրքականությանը, Թուրքիայի հանրապետությանը կամ Ազգային մեծ ժողովին ուղղված հանրային վիրավորանքը պատժվելու է վեց ամսից մինչև երեք տարի ազատազրկմամբ»[45]: Բացի այն, որ այդ օրենքի ընդունումով առաջացան ակնհայտ խնդիրներ՝ կապված ազատության և խոսքի ազատության իրավունքների խախտման հետ, դա նաև հանգեցրեց մի քանի ուշագրավ իրադարձությունների, որոնց թվում էր լրագրող Հրանտ Դինքի ներքաշումը դատական գործընթացների մեջ, քանի որ վերջինս մերժում էր 301-րդ հոդվածը[46]: Դինքը չէր դադարում օգտագործել «ցեղասպանություն» բառը նույնիսկ թուրք ազգայանականների հնչեցրած կյանքի սպառնալիքների ազդեցությամբ: Նրան սպանեցին 2007թ. հունվարի 19-ին՝ իր իսկ թերթի գրասենյակի առջև[47]:

---

[42] **Totten S., Jacobs S. L.,** Pioneers of Genocide Studies, London, Transaction Publishers, 2013.
[43]Նույն տեղում:
[44] **Halliday T. C., Karpik L., Feeley M. M.,** Fighting for Political Freedom: Comparative Studies of the Legal Complex and Political Liberalism, London, Bloomsbury Publishing, 2007.
[45] **Halliday T. C., Karpik L., Feeley M. M.,** Ն շ վ . աշ խ., է ջ 242:
[46] **Swaim L.,** Trauma Bond: An Inquiry into the Nature of Evil, London, JHP, 2013.
[47]Նույն տեղում:

Էրդողանի պաշտոնավարման շրջանում արձանագրված հնարավոր փոփոխությունները

Վերոնշյալ ապացույցների կշիռը, տրամաբանական կապակցվածությունը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության թուրքական ժխտումների վայրագությունը դիտարկելիս՝ գործնականում պետական մակարդակով էական փոփոխություններն ու լարվածության թուլացումը թվում են անհնար: Այնուամենայնիվ, որոշ փաստարկներ վկայում են, որ այդ գործընթացը տեղի է ունեցել ժամանակակից թուրքական քաղաքականության և հասարակության մեջ: Անհատական մակարդակում Էրդողանը հաճախ է հակասություններ ունենում օրենքի և ինքնության քաղաքականության հետ: Օրինակ, 1990-ական թվականներին նա ձերբակալվեց և բանտարկվեց հանրահավաքի ժամանակ կրոնական մետաֆորներ պարունակող բանաստեղծություն ընթերցելու համար[48]: Այդուհանդերձ, հանրության առջև Հայոց ցեղասպանության ընդունման և ճանաչման վերաբերյալ Էրդողանի դիրքորոշումը Թուրքիայի առաջնորդների նախորդ սերունդների քաղաքականության շարունակությունն է[49]: Էրդողանի պաշտոնավարման շրջանի վերլուծությունը կարևոր է սկսել նրա հարապարակային հայտարարություններով, քանի որ, որպես երկրի ղեկավար, նրա տեսակետներն ու հայտարարությունները սահմանում են երկրի պաշտոնական քաղաքական խոսույթի բնույթը: Ի տարբերություն նախորդ ղեկավարների հայտարարությունների, որոնցում կտրականապես և ուղղակիորեն մերժվում էին հայկական կողմի պնդումները՝ Էրդողանի հռետորաբանությունն ունի հաշտեցման տարրեր[50]: Սակայն կարևոր է նշել, որ միայն նախորդ հայտարարությունների հետ համեմատության լույսի ներքո է երևում այդ տարբերությունը, իսկ ուղերձների բովանդակության

[48] **Mandaville P.,** Islam and Politics, London, Taylor & Francis, 2014.
[49] Erdogan: Armenia"genocide" used to blackmail Turkey, *Al-Jazeera,* 4 June, 2016, http://www.aljazeera.com/news/2016/06/erdogan-armenia-genocide-blackmail-turkey- 160604151409300.html, (17.04.2017).
[50] Turkey reinstates Vatican envoy after row over Pope's Armenian remarks, *Reuters,* 4 February, 2016, http://www.reuters.com/article/us-turkey-vatican-armenians-idUSKCN0VD1QT, (17.04.2017).

տեսանկյունից կարելի է արձանագրել ժխտման քաղաքականության շարունակականություն:

Նախագահության ստանձնումից ընդամենը ամիսներ առաջ Էրդողանն «աննախադեպ ցավակցություններ» էր հայտնել Առաջին համաշխարհային պատերազմում օսմանյան զինվորների կողմից սպանված հայերի թոռներին[51]: Նա մատնանշել էր այն «անմարդկային վերաբերմունքը», որին ենթարկվել են հայերը: Այդ հայտարարությունը կարևոր նշանակություն ունեցավ մի քանի պատճառներով[52]: Նախևառաջ, հայտարարությունը հրապարակվեց 1915թ. Կոտորածների 99-ամյակի նախօրեին[53]: Երկրորդ, դա կարևոր իրադարձություն էր հայեցակարգային մակարդակում՝ ազդարարելով շեղում հայերի՝ որպես «դավաճանների», նախկին ազգայնամոլ նկարագրությունից, քանի որ «դավաճաններին չեն ցավակցում»[54]: Երրորդ, և առավել կարևոր հանգամանքը, նախկին խոսույթներից շեղումը ցույց տվեց թուրքական առաջնորդների որդեգրած գրեթե հարյուրամյա հռետորաբանության հիմքում ընկած ժխտման ավանդական դիրքորոշումից անցում կատարելու պոտենցիալ պատրաստակամությունը[55]: Մինչ այս պահը Էրդողանը վերահաստատել է հայերի և թուրքերի միջև ընդհանուր լեզու գտնելու անհրաժեշտության մասին իր համոզմունքը. «Մենք միշտ կհիշեցնենք և կհիշենք թուրքերի ու հայերի համագոյակցության մշակույթը, որն ունի գրեթե հազարամյա պատմություն»[56]: Միաժամանակ, հարկ է նշել, որ Էրդողանը շարունակում է մերժել «ցեղասպանություն» եզրույթի կիրառումը 1915թ. հայերի զանգվածային սպանությունների առնչությամբ: Սակայն 2016թ. ապրիլի 15-ին Թուրքիայի հայոց պատրիարքություն

[51] Նույն տեղում:
[52] Rethink Institute 2014, 2015 Turkey Country Report. Washington, Rethink Institute, p. 70.
[53] Turkish PM offers condolences over 1915 Armenian massacre, *The Guardian,* 23 April, 2014, https://www.theguardian.com/world/2014/apr/23/turkey-erdogan-condolences-armenian- massacre, (17.04.2017).
[54] **De Waal T.,** Great Catastrophe: Armenians and Turks in the Shadow of Genocide, Oxford, Oxford University Press, 2015.
[55] **Demirdjian A.,** նշվ. աշխ.:
[56] Erdogan: Turkey is "most meaningful place" to mark Armenian genocide, *Newsweek*, 2016, http://www.newsweek.com/erdogan-turkey-most-meaningful-place-mark-armenian-genocide- 452030 (18.04.2017).

այցելության վերաբերյալ նրա մեկնաբանություն-ներն ավելի մեղմ էին՝ ի տարբերություն երկրի նախորդ առաջնորդների հնչեցրած մեկնաբանությունների[57]: Էրդողանը նշում էր, որ «ողջունում է հիշատակման արարողությունը, որը կրկին տեղի է ունենում Թուրքիայում՝ օսմանյան հայերի ցավը կիսելու և նրանց հիշատակը հարգելու առավել նպատակահարմար վայրում»[58]:

Կարևոր է կրկին ընդգծել, որ անկախ այդ հայտարարության կարևորությունից, Էրդողանը շարունակում է մերժել «ցեղասպանություն» եզրույթը: Ժամանակ առ ժամանակ այդ հարցի վերաբերյալ նրա հռետորաբանությունը հիշեցնում է թուրքական ժխտողականության քաղաքականության նախկին փուլերում կիրառվող հռետորաբանությունը՝ վերաճելով ռազմատենչության այն ժամանակ, երբ միջազգային հանրության կողմից այդ հարցի վերաբերյալ ճնշումները մեծանում են [59]: Էրդողանը հայտարարել է, որ 1915թ. իրադարձությունները ցեղասպանություն ճանաչելու պահանջները «կմտնեն Թուրքիայի մի ականջից, դուրս կգան՝ մյուսից» և որ Թուրքիան «երբեք» չի ընդունի այդ մեղադրանքը[60]: Հայկական կողմի պատասխանը պետք է դիտարկել որպես կարևոր ասպեկտ Էրդողանի հայտարարությունների համատեքստում՝ անկախ նրանից դրանք դիտարկվում են որպես թուրքական ժխտողական քաղաքականության շարունակություն, թե դրանից շեղում: Օրինակ, Միացյալ Նահանգների «Հայ Դատի» հանձնախմբի պատասխանը բավական կտրուկ էր[61]: Ըստ Արամ Համբարյանի, թուրքական կառավարությունը Էրդողանի գլխավորությամբ պարզապես «վերաձևում է ցեղասպանության ժխտումը»[62]: Նա իր դիրքորոշումն ամրապնդում է հետևյալ հաստատագրմամբ. «Փաստ է, որ այդ սառնարյուն և ցինիկ հնարքը

---

[57] Նույն տեղում:

[58] Նույն տեղում:

[59] Erdogan: Armenia "genocide"... նշվ. աշխ.; Turkey cannot accept Armenian genocide label, *The Guardian*, April 2015, https://www.theguardian.com/world/2015/apr/15/turkey-cannot-accept-armenia-genocide-label- erdogan, (17.04.2017).

[60] Նույն տեղում:

[61] Turkish PM offers..., նշվ. աշխ.:

[62] Նույն տեղում:

պարզորոշ ցույց է տալիս, որ այսօր Թուրքիան ավելի է սրացնում ճշմարտության մերժման և Հայոց ցեղասպանության առնչությամբ արդարության վերականգնման գործընթացը»[63]: Նույնիսկ Թուրքիան՝ որպես 1915թ. իրադարձությունները հարգելու առավել նպատակահարմար վայր ճանաչելու փորձերը, արժանացել են ՀՀ արտգործնախարարի սուր դիմակայությանը[64]: 2016թ. այդ հայտարարությունները ՀՀ պաշտոնական մակարդակում մեկնաբանվել են որպես «պատերազմի զոհերի և ցեղասպանության զոհերի հավասարեցման փորձ»: Ըստ ՀՀ կառավարության դիրքորոշման, «Թուրքիայի ժխտողական քաղաքականությունն ավելի է խորացնում հայ և թուրք ժողովուրդների միջև պառակտումը, մինչդեռ դրա հաղթահարման լավագույն ձևը պատմության առջև կանգնելն ու ապաշխարհելն է»[65]:

Էրդողանի պաշտոնավարման շրջանում հնարավոր փոփոխությունների ըմբռնումը

Չնայած հայկական կողմը կտրականապես ժխտում է, որ Էրդողանի պաշտոնավարման շրջանում խոսույթը մեղմացել է, այդուհանդերձ ծայրահեղ կլինի պնդել, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ դիրքորոշման հարցում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել: Դիրքորոշման հավանական փոփոխությունների և հայկական կողմի հակափաստարկների համատեքստում կարևոր է դիտարկել այն աստիճանը, որով վերջին տարիներին Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանավեճերը ստացել են միջազգային բնույթ[66]: Բացի եվրոպական խորհրդարանի բանաձևերից՝ եվրոպական երկրների կողմից ևս ընդունվել են մի շարք խորհրդարանական բանաձևեր՝ ուղղված Հայոց ցեղասպանության ճանաչմանը[67]: Ինչպես նշում է Թերզին, դրա արդյունքում 1915թ. իրադարձությունների վերաբերյալ

[63] Նույն տեղում:
[64] Erdogan: Turkey is..., նշվ. աշխ.:
[65] Նույն տեղում:
[66] **Kappler S., Kasparian S., Godin R., Chabot J.,** Mass Media and the Genocide of the Armenians: One Hundred Years of Uncertain Representation, Basingstoke, Palgrave Macmillan UK, 2016.
[67] **Terzi Ö.,** The Influence of the European Union on Turkish Foreign Policy, London, Taylor & Francis, 2016.

թուրքական խոսույթում և թուրք ժողովրդի ընդհանուր գիտակցության մեջ ի հայտ եկան անկայունության որոշ դրսևորումներ, քանզի դա վիճարկում էր թուրքական պետության կողմից քարոզվող այն պատմությունը, որ սպանությունները փոխադարձ թշնամանքի և պատերազմի արդյունք էին[68]:

Ներկայումս 26 պետություններ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, և թեև դա հարաբերականորեն փոքր թիվ է, Էրդողանի վարչակազմի պատասխանը Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված միջազգային ջանքերին կասկածներ է հարուցում իրական հաշտեցման հնարավորությունների վերաբերյալ[69]: Պետասիսը համարում է, որ «հայկական սփյուռքի ակտիվ և ագրեսիվ քարոզարշավը՝ ուղղված ցեղասպանության ճանաչմանը», միջազգային հարթակում զգալի տեղաշարժի պատճառ դարձավ, և 2015թ. մի շարք իրադարձությունների արդյունքում Էրդողանը հայտնվեց ուժեղ միջազգային ճնշման ներքո[70]:

Երբ 2015թ. Հռոմի Ֆրանցիսկոս Պապը Հայոց ցեղասպանությունը հիշատակեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, Թուրքիան իր դեսպանին ետ կանչեց Վատիկանից 10 ամիս ժամկետով, ինչը դիվանագիտական հարաբերությունների համար զգալի ժամանակահատված է[71]: Հռոմի Պապի հայտարարություններին հաջորդեցին ևս մի քանի առանցքային իրադարձություններ[72]: 2015թ. ապրիլին Ավստրիայի խորհրդարանը 1915թ. իրադարձությունները պաշտոնապես որակեց որպես ցեղասպանություն: Թուրքիայի արձագանքը դրան կտրուկ էր[73]: Թուրքիան ետ կանչեց իր դեսպանին և

---

[68] Նույն տեղում:

[69] Armenian National Institute, Countries that recognise the Armenian Genocide, 2017, http://www.armenian-genocide.org/recognition_countries.html (18.04.2017); **Hunter S. T.,** God on Our Side: Religion in International Affairs, Maryland, Rowman & Littlefield Publishers, 2016.

[70] **Petasis A.,** Intractable Dilemmas in the Energy-Rich Eastern Mediterranean, Cambridge, Cambridge Scholars Publishing, 2016.

[71] **Mccormack J.,** Unexpected Treason: Barack Hussein Obama, Philadelphia, BB, 2016; Turkey reinstates..., նշվ. աշխ.:

[72] Turkey says Austrian accusation of Armenian genocide damages ties permanently, *Reuters,* 22 April, 2015, http://www.reuters.com/article/us-turkey-erdogan-armenia-idUSKBN0ND1AD20150422, (18.04.2017).

[73] Նույն տեղում:

հանդես եկավ կարճ հայտարարությամբ, որում խոսվում էր հայտարարության պատճառած «վրդովմունքի» մասին և նշվում էր թուրք-ավստրիական հարաբերությունների վրա դրա «տևական բացասական ազդեցություն» մասին[74]: 2016թ. հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանի ընդունած բանաձևը Թուրքիայի կառավարությանը հասցված հաջորդ հարվածն էր[75]: Արձագանքը գրեթե նույնական էր: Թուրքիան ետ կանչեց իր դեսպանին, և ընթանում էին քննարկումներ խարխլված երկկողմ հարաբերություն-ների մասին[76]: Էրդողանի արձագանքը բանաձին հատկանշական էր, քանի որ այն պարունակում էր միջազգային համայնքի՝ ցեղասպանության ճանաչմանն ուղղված փորձի, առավել սուր քննադատություն և մատնանշում էր նրա և նախկին թուրքական կառավարությունների քաղաքականությունների միջև շարունակակա-նության աստիճանը[77]: Ցեղասպանության ճանաչմանն ուղղված միջազգային ջանքերը բնորոշելով որպես «շանտաժ», որն օգտագործվում է որպես «փայտիկ Թուրքիայի դեմ», Էրդողանն արտահայտեց իր դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ շատ պարզ ձևակերպումներով. «Ես դիմում եմ ամբողջ աշխարհին: Դա ձեզ կարող է դուր գալ, կարող է դուր չգալ: Հայկական հարցի վերաբերյալ մեր դիրքորոշումը պարզ էր հենց սկզբից: Մենք երբեք չենք ընդունի ցեղասպանության մեղադրանքները»[78]:

Կարևոր է հասկանալ, որ թուրքական իշխանության կողմից այդպիսի ժխտումները միջազգային դատապարտմանն արձագանքելու տևական պատմության մաս են[79]: 1990-ական թվականներին և 2000-ական թվականների սկզբին Եվրոպական խորհրդարանը, Կիպրոսը, Հունաստանը, Իտալիան և Ռուսաստանի ու Բելգիայի խորհրդարան-

---

[74] Նույն տեղում:

[75] **Hunter S. T.,** նշվ. աշխ.:

[76] Turkey recalls ambassador after German MPs Armenian genocide vote, *The Guardian*, June 2016, https://www.theguardian.com/world/2016/jun/02/germany-braces-for-turkish-backlash-as-it- votes-to-recognise-armenian-genocide, (18.04.2017).

[77] Erdogan: Armenia "genocide"..., նշվ. աշխ.:

[78] Նույն տեղում:

[79] **Hovannisian R. G.,** Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide, London, Transaction Publishers, 2009.

ները կիրառում էին ցեղասպանություն եզրույթը 1915թ. իրադարձությունների առնչությամբ, իսկ 2001թ. Ֆրանսիայի կառավարությունն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծ[80]: Թուրքիան ետ կանչեց իր դեսպանին Ֆրանսիայից և չեղարկեց ռազմական հետախուզության վերաբերյալ 200 միլլիոն դոլար արժողությամբ պայմանագիրը[81]: Ակնհայտ է, որ այդ վարքագծի և միջազգային մեղադրանքներին Էրդողանի կառավարության արձագանքի միջև կա հստակ համապատասխանություն: Այդպիսով, հարց է առաջանում, թե արդյոք Էրդողանի պաշտոնավարման շրջանում խոսույթի մեղմացումը գործողությունների վրա էական ազդեցություն ունեցել է, թե ոչ: Ուստի, թեև Թուրքիան փորձում է հանդես գալ հաշտեցման տոնով՝ նշելով, որ «թուրքերը և հայերը պետք է համատեղ ջանքեր գործադրեն այդ իրավիճակից լուծումներ գտնելու համար» և որ «Թուրքիան պատրաստ է անել աշխատանքի իր մասը», այդ զգացմունքային կոչերի հետևում որևէ գործնական քայլ չկա[82]: Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության հարցն ունի ինչպես պետական, այնպես էլ միջազգային չափում, և դա կարևոր է հաշվի առնել, երբ ուսումնասիրվում է, թե ինչպես է Էրդողանի կառավարությունը մոտեցել այդ հարցին և ձևակերպել այն: Նախ, թուրք հանրության շրջանում անցկացված հասարակական կարծիքի հարցման արդյունքները ցույց են տվել հասարակության դիրքորոշումը 1915թ. իրադարձությունների վերաբերյալ: Տնտեսական եւ արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոնի կողմից 2014թ. Թուրքիայում անցկացված հարցման արդյունքում ձևավորվել է խառը պատկեր այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է թուրքական կառավարությունը գործնականում արձագանքի Հայոց ցեղասպանու-թյանը[83]:

Թուրքերի միայն 9.1 տոկոսն է կարծում, որ կառավարությունը 1915թ. իրադարձությունները պետք է ճանաչի որպես ցեղասպանու-

[80] Նույն տեղում:
[81] Նույն տեղում:
[82] ECHR: Why turkey won"t talk about the Armenian genocide, *The Telegraph*, 2015, http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/turkey/11373115/Amal-Clooneys-latest- case-Why-Turkey-wont-talk-about-the-Armenian-genocide.html, (18.04.2017).
[83] EDAM 2015, Turkey regretful over the Armenian tragedy of 1915 but refuse to qualify it as a genocide, http://www.edam.org.tr/en/File?id=2162 (18.04.2017).

թյուն, սակայն հատկանշական է այն, որ թուրքերը հստակ ճանաչում են, որ այդ ժամանակաշրջանում զոհվել է զգալի թվով մարդ[84]: Դա կարևոր հանգամանք է, քանի որ ավելի վաղ փուլերում շատ թուրքեր նույնիսկ տեղյակ չէին այդ կոտորածներից, և, հետևաբար, որևէ տեսակետ չէին կարող ունենալ հարցի վերաբերյալ: Հարցվածների մյուս 9.1 տոկոսը համարում է, որ Թուրքիան պետք է ներում հայցի հայերից առանց «ցեղասպանություն» եզրույթի կիրառման, իսկ 12 տոկոսը կարծում է, որ պետք է ափսոսանք հայտնել առանց այդ եզրույթի կիրառման[85]: 23.5 տոկոսը համարում է, որ Օսմանյան կայսրության բոլոր զոհված քաղաքացիները պետք է դիտարկվեն հավասարապես, իսկ 21.3 տոկոսը կարծում է, որ հայկական խնդրի վերաբերյալ որևէ քայլ չպետք է ձեռնարկել[86]: Հարցվածների մնացած 25 տոկոսը նշել է, որ ծանոթ չէ այդ հարցին կամ չունի պատասխան[87]: Այդ համատեքստում նախագահ Էրդողանը բավական ճշգրիտ արտացոլում է թուրք հասարակության տեսակետները՝ կիրառելով զղջումների և հաշտեցման երանգ ունեցող խոսույթ, բայցևայնպես չանցնելով կարմիր գիծը, այն է՝ «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումը:

Այդուհանդերձ, նախորդ քսան տարիների ընթացքում իրական հանրային երկխոսություն սկսելու ջանքեր են գործադրվել[88]: 2001թ. ձևավորվեց Հայ-թուրքական հաշտեցման հանձախումբը, իսկ դրանից մեկ տարի առաջ հանդիպեցին թուրք և հայ պատմաբանները և ունեցան բաց երկխոսություն[89]: 2008թ. ազդարարվեց «ֆուտբոլային դիվանագիտության» շրջանը, որը սկսվեց Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպման առիթով Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլի այցով, որի պատասխանը եղավ 2009թ. Հայաստանի նախագահի

[84] Նույն տեղում:
[85] Նույն տեղում:
[86] Նույն տեղում:
[87] Նույն տեղում:
[88] **De Waal T.**, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York, NYU Press, 2003.
[89] Նույն տեղում:

Թուրքիա այցելությունը միևնույն նպատակով[90]: Այդ ժամանակ հույսեր կային երկկողմ հարաբերությունների կարգավորման և հայ-թուրքական սահմանի բացման համար[91]: Այդուհանդերձ, թեև Էրդողանի պաշտոնավարման շրջանը սկսվել էր Հայոց ցեղասպանության վերաբերյալ ավելի մեղմ խոսույթով, վերջին տարիների ներպետական քաղաքական զարգացումները նույնպես սկսել են ազդել խնդրի վրա, քանի որ Թուրքիայի ներսում քաղաքական անկայունությունը մեծացել է[92]: Թուրքիայում մարդու իրավունքների հետ կապված խնդիրները, քրդերի հետ շարունակական կոնֆլիկտը, սիրիական հակամարտությամբ պայմանավորված փախստականների ճգնաժամը, ինչպես նաև Էրդողանի դեմ ուղղված ռազմական հեղաշրջման փորձը խաթարեցին երկրի քաղաքական կայունությունը[93]: 2017թ. ապրիլի 16-ին Թուրքիայում անցկացված սահմանադրական հանրաքվեն էլ ավելի ընդգծեց Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ առկա արմատական խնդիրները[94]: Այդ համատեքստում կարելի է պնդել, որ Էրդողանը մանևրելու և փոխզիջման գնալու ավելի քիչ հնարավորություններ ունի հատկապես այն ժամանակ, երբ միջազգային հանրության կողմից հնչող քննադատությունը ուժգնանում է[95]: Դրա պատճառն այն է, որ միջազգային դատապարտումը հանգեցնում է Թուրքիայում դիրքորոշումների կոշտացմանը, ինչի առնչությամբ Էրդողանը՝ որպես Թուրքիայի բարձրագույն ընտրովի քաղաքական ներկայացուցիչ, պետք է զգուշավոր լինի[96]:

---

[90] **Kambeck M., Ghazaryan S.,** Europe's Next Avoidable War: Nagorno-Karabakh. Basingstoke, Palgrave Macmillan UK, 2013, p, 119; **Finkel A.,** Turkey: What Everyone Needs to Know?, Oxford, Oxford University Press, 2012.

[91] Նույն տեղում:

[92] **Hunter S. T.,** նշվ. աշխ.:

[93] Նույն տեղում:

[94] Turkey Referendum, *BBC News,* 2017, http://www.bbc.co.uk/news/world-europe-39626116 Accessed (18.04.2017).

[95] **Finkel A.,** նշվ. աշխ.:

[96] Նույն տեղում:

Եզրակացություն

Հոդվածում նշվում է, որ թուրքական պետության պաշտոնական խոսույթը զարգացել է Էրդողանի պաշտոնավարման շրջանում, սակայն կարևոր է չգերագնահատել դրա զարգացման աստիճանը: Էրդողանի պաշտոնական դիրքորոշումը կարելի է որակել որպես ոչ ավելին, քան մակերեսային փոփոխություն, և այս տեսակետի կողմնակիցներն այդ փաստարկը հիմնավորում են զգալի ապացույցներով: Այն իրավիճակներում, երբ Թուրքիան ենթարկվել է ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ուժեղ միջազգային ճնշումների, Էրդողանն ակնհայտորեն ցույց է տվել, որ չի ցանկանում գնալ այդ ճանապարհով: Սակայն, ինչպես ներկայացվում է հոդվածում, կարևոր է դիտարկել պատմական, քաղաքական, մշակութային և սոցիալական մի շարք գործոններ, որոնք կարևոր են Թուրքիայում հայերի ցեղասպանության հարցի առնչությամբ: Թուրքական պետության ստեղծման պահից սկսած ինքնության քաղաքականությունը սերտորեն կապված է եղել Հայոց ցեղասպանության հարցի հետ, քանի որ Թուրքիայի առաջնորդները փորձել են թուրք հասարակության կոլեկտիվ գիտակցությունից ջնջել Օսմանյան կայսրության անցյալը: Պատմության նենգափոխումը խոր ազդեցություն է ունեցել թուրքական մշակույթի, քաղաքականության և հասարակության վրա, և ազգայնականությունը, որը սերմանվել է, անհամատեղելի է փոքրամասնությունների դեմ անցյալում կատարված վայրագությունների ճանաչման հետ, հատկապես այն դեպքում, երբ որոշ փոքրամասնություններ շարունակում են համարվել վտանգավոր թուրքական պետության և միատարրության համար:

Այդ տեսանկյունից զարմանալի չէ, որ ցեղասպանության ժխտումը ավելի քան մեկ դար շարունակում է մնալ թուրքական քաղաքականության և ինքնության անբեկանելի բնորոշիչ, և անհնար է դա անվանել այլ բան, քան ժխտողականություն՝ հաշվի առնելով ծանրակշիռ պատմական փաստերի առկայությունը, որոնք ապացուցում են ցեղասպանության եղելությունը: Էրդողանն, անկասկած, ժամանակ առ ժամանակ օգտագործում է ավելի մեղմ և հաշտեցման երանգներ պարունակող խոսույթ, սակայն

ցեղասպանություն եզրույթը ճանաչելու հիմնախնդրի վերաբերյալ նրա դիրքորոշումը շարունակում է մնալ հաստատուն: Վերջին մի քանի տարիներին միջազգային ճնշումները շատ դեպքերում հակառակ արդյունք են ունեցել՝ կոշտացնելով երկու կողմերի դիրքորոշումները և բորբոքելով առկա լարվածությունն ու Էրդողանի հռետորաբանությունը, քանի որ վերջինս փորձում է հիմնավորել հարցի վերաբերյալ թուրքական տեսանկյունը: Այդ համատեքստում ավելորդ լավատեսություն կլինի պնդումը, որ հաշտեցումը կարճաժամկետ հեռանկարում կարող է իրականանալ, հաշվի առնելով այդ գործընթացի ճանապարհին ընկած մի շարք խոչընդոտներ և «ցեղասպանություն» բառի ընդունման բևեռացնող պոտենցիալը:

How has the Turkish state's official discourse of the Armenian genocide evolved during the Erdogan era?

HASSANE ELAYYADI
Goldsmiths University of London, United Kingdom

Turkey has failed to recognize the massacres of 1915 as genocide for over one hundred years. The reasons are profound and extend deep into the sense of identity that Turks and the Turkish state have sought to form since the birth of the country. The article considers why the denial has been the case in the face of the overwhelming historical evidence and whether there have been any potential changes under the leadership of Erdogan. It argues that the Turkish state's official discourse of the Armenian genocide has evolved during the Erdogan era, meanwhile stressing that it is important not to overstate the extent to which the discourse has evolved. Although Erdogan has adopted a softer and a more conciliatory tone at times, he has stayed consistent on the fundamental issue of recognizing the term genocide throughout this process.